

Հանճարները նախ մէկմէկէ հեռու թափառելէն վերջը՝ իրենց հանճարէն դուրս սահմանի մը մէջ հանդիպեցան մէկմէկու և միաբան դարձան նորէն առ Մուսայա։ Անկէ ետեւ բնաւ մէկը երկասիրութիւն մը չէր հրատարակեր առանց միւսոյն ցուցնելու և իր կարծիքը ընդունելու։ այսպէս երկար ժամա-

նակ առաջ քալեցին իրենց ասպարիզին մէջ՝ մինչև որ անասնկալ և տարածամ մահ մը յափշտակեց զկրտսերագոյնը՝ այն է զՇԻԼԷՐ 46 ամեայ, մինչ Նեթէ 56 տարուան էր և դեռ ասպրեցաւ անմիտ թար իր սիրելի և մտերիմ բարեկամին մահուան վրայ մինչև 1832։

ԱՐՏԱՇԷՍ

ԱՆՁԻՆՔ

ԱՐՏԱՇԷՍ, Որդի Քաղաքեայ Պարսից տրբայի։
ՇԱՊՈՒՆ, Եղբայր նորա։
ԱՐՏԱԽԱՆ, Զօրավար Պարսից։

ԱՐՏԱԿ, Որդի Արտուանայ։
ՄԻՆՆՐԱՏ, Ապարապետ։
ԱՐՇԱՄ, Զինակեր։

Տեսարանն է 'ի Շօշ յարքունիս Պարսից։

ԱՐՄՐՈՒՄԻ Ա.

ՏԵՍԻԱ Ա.

Արբակ եւ Շապուհ

ԱՐՏԱԿ

Մնա խաղաղութեամբ։

ՇԱՊՈՒՆ

Ի՞նչ ինձ Արբակ, յո՞ երթաս։

ԱՐՏԱԿ

Ա՛հ իմ Շապուհ, ահաւասիկ առաւօտն մերկանայ. և եթէ ազդ լիցի հօր քում ֆաներքսեայ եթէ ես հակառակ նորա անօրէն հրամանացն հասեալ կամ այսր յարբուներս, ոչ բաւեսցես դու ինքնին արքայորդիդ կալ ինձ 'ի թիկունս։

ՇԱՊՈՒՆ

Իմաստութեամբ է երկիւղդ. սակայն հայր մեր ֆաներքէս յարբունեաց աստի միայն՝ զքեզ հալածեաց, ոչ 'ի քաղաքիս. մարթ է քեզ կալ ուրեր 'ի Շօշ քաղաքիս, չե՞ և հատեալ մեր ամենայն յոյս. այն զի և այնմ չես ինչ անտեղեակ զի հոյր քո Ար-

տուան 'ի բռն ունի զսիրտ հօր մերոյ, և յոր կողմ և կամի շրջէ զնա, և իշխանութիւն ունի մօտենէլ յամենայն շտեմարանս մեր, և եղբայր իմ Արտաշէս բարեկամ քո է. զօրականն և ժողովուրդ 'ի քեզ են հարեալ, և արքայութիւնս մեր 'ի քո բազուկ ասպատան կայ. յայսչափ բարեկամաց միջի գտցես քեզ արդեօք զօրավիզն զոր և օգնական։

ԱՐՏԱԿ

Քաջ է. այլ զեղբայր քո մի 'ի զուր գումարեր ինձ 'ի թիկունս, զի և 'ի նմանէ ոչ սակաւ քան թէ 'ի հօրէ իմմէ երկմտութեամբ թերացեալ է արքայ։ Իսկ բարեկամութիւնն ուսմիկին յեղյեղուկ անօգուտ է և սնտոյ՝ եթէ ձեռն արքայի անդ ոչ հովանացի։ Ո՛չ ահա ամենեքին տիգօք աչաց խաղացեալ են յիմ վերայ, և ո՞ր իցէ յոյսն. նա աւանիկ և քեզ մեծապէս է վրտանգ, զի կասկածանս ի վերայ կասկածանաց յաւելումք ֆաներքսեայ և ինձ տազնապ անհնարին. զի առ ձեզ կալով ոչ կարողմ վայելել ի սէր քո՝ իմ բարեկամիդ, իմ առ ձեզ միամտութեամբ բարեկամութիւն՝ զիս պարտաւոր արար. ապա ոչ սուհնեալ ևս կամ մեռայց և կամ պատուոյ

առ ի ձէնջ արժանի գտայց. մնա խաղա-
ղութեամբ:

ՇԱՊՈՒՆ

Այ անագորոյն, զիարդ լքեալ թողուս զիս
այսպէս միայնակ:

ԱՐԲԱՅ

Չեմ ես անագորոյն, բռնաւոր է Գանբ-
քսէս, նա է անիրաւ:

ՇԱՊՈՒՆ

Սակայն ներողութեան է արժանի և նա...
« գիտէ եթէ և ոչ ի վերին երեսս ինչ իցէ
այդ խորագիտութեամբ:

ԱՐԲԱՅ

Այս իցէ խորագիտութիւն. հալածել զիս
իբրև զմի ի սինջոր խաժամուժ ամբոխէն,
և անուն վատութեան և յանդգնութեան
ի վերայ իմ կապել. ահ, բուռն է ինձ ի
թշամանող լեզուէն. եթէ ոչ և իմ նախ-
նիք Թագապսակ շրջեցան յերկրի, շատ է
այն եթէ գոնեայ զիրոցն պահեցին նմա.
եթէ աստ յերակուս իմ ոչ խաղայ ա-
րին արբունի, սակայն գտաւ յիս երբեմն
զօրութիւն պաշտպանել արեան որդւոյն
յասպարէդ մարտի. թող եթէ կարէ՝ յանձն
իւր պարծեսցի և մի ի նախնիս. մեծու-
թիւն տոհմի՝ բաղդ է և ոչ առաքինու-
թիւն. զի եթէ ծննդոց միտք էին կառա-
վար և զարժանին ի Թագաւորութիւն
տայր ծնանել, թերևս արդ Արբակ՝ Գանբ,
քսէս էր, և Գանբքսէս՝ Արբակ:

ՇԱՊՈՒՆ

Եւ ոչինչ ակն ածես դու առաջի իմ խօսել
ղայգոսիկ:

ԱՐԲԱՅ

Շատ իսկ ակն ածեալ է իմ ցարդ երեսաց
քոց. բայց աղէ՛ դու սիրեցեալդ իմ Շա-
պուհ, յուշ լիցին քեզ թշամանքս, և մի
զուր տարապարտուց...

ՇԱՊՈՒՆ

(Ընդհատէ) Չէ ինչ, անցցեն բանքն. այլ
զիարդ իցէ սէր քո ընդ իս. զարմանամ
ընդ այնչափ բարկութիւնդ. ոյլ սիրտ
որ զծնողն ատենայ՝ զիարդ զծնեալն սիրիցէ:

ԱՐԲԱՅ

Այս ատելութիւն սիրոյ է նշանակ. սէր քո
զիս ի բարկութիւն զրգռէ. գիտեմ զի ի

թողուն զքեզ՝ այլ ոչ ևս գտից, և թերևս
այս իցէ մեզ վերջին տեսութիւն. բարձ
ընդէր լաս... Դադարեալ ի լալոյդ, այժմ՝
ինձ անգթութեան պէտք են. թոյլ տուր
ինձ մեկնիլ աստի. գոնեայ անգթութեան
հօր քում նմանեաց. (Սկսանի երբայ):

ՇԱՊՈՒՆ

Յո՛ գնաս, կաց մնաց վայր մի. ոչ հան-
դուրժէ սիրտ իմ եթէ թողեալ զիս այսպէս
հալածական երթիցես, այլ ես նախ մեկնե-
ցայց ի քէն. ողջամբ կացջիր սիրելի իմ.
(Սկսանի երբայ):

ԱՐԲԱՅ

Ողջամբ երթիցես սիրեցեալդ իմ Շապուհ:

ՇԱՊՈՒՆ

(Դառնայ) Հաւատարիմ լեր, Արբակ, գիտես
զի ես քեզ մնամ. մի մոռանար զիս, միւս-
անգամ տեսցուք զմիմեանս:

ՏԵՍԻՒԼ Բ.

Արբակ եւ Արտաւան

ԱՐԲԱՅ

Չինչ արդեօք գուշակեցէ՛ հրամանս, և
զի՛նչ այն շտապ գնալոյն. ահ Շապուհ.
(Մտանէ Արտաւան):

ԱՐՏԱԽԱՆ

Արբակ Արբակ, որդի իմ:

ԱՐԲԱՅ

Ահաւասիկ ևս, հայր:

ԱՐՏԱԽԱՆ

Տուր ինձ այսր զքո սուսեր:

ԱՐԲԱՅ

Աւասիկ է:

ԱՐՏԱԽԱՆ

Ա՛ռ դու զիմս, փախիր, որդեակ, ծածկեա
զարիւնդ, մի՛ ոք տեսցէ ինչ և կամ գի-
տացցէ բնաւ:

ԱՐԲԱՅ

Բա՛րէ, մյր իցէ արիւնս:

ԱՐՏԱԽԱՆ

Երթ. լուիցես ապա յինէն զամենայն:

ԱՐՔԱԿ

Այլ քո այլագունեալ գէմբ, ո՛հ հայր, և երկիւղալից աչք զարհուրեցուցանեն զիս. զի՛նչ իցէ զի ոչ հանդարտես խօսել. զի՛ եղև բեզ, աղէ՛ ասա:

ԱՐՏԱԽԱՆ

Խնդրեցի զվրէժ քո. սատակեցաւ Քսեր. քէս ի բազկէ աստի:

ԱՐՔԱԿ

Զի՛նչ ասես, զի՛ գործեցեր:

ԱՐՏԱԽԱՆ

Որդեալ իմ սիրելի, Թշնամանք քո և յիս ինքն ազդեցին. վասն քո՛ հեղի զարիւնդ:

ԱՐՔԱԿ

Վասն իմ հեղեր. այս միայն պակասէր ՚ի տառապանս իմ: Այլ զիարդ հայր, և ո՛ր գործեցեր զայդ ՚ի խոր գիւլերի. ո՛չ մեկնեցայց ՚ի քէն մինչև ոչ պատմեսցես:

ԱՐՏԱԽԱՆ

Իմ ի բազմաց հետէ երկնեալ էր զայդ ի սրտի, սակայն հնարս որսայի և ահա այժմիկ յաղղեցաւ ի ձեռս իմ: Իբրև ընդ մութ գիւրդոյն գնացին ամենեքեան ՚ի քուն մտանել, տաքնապեալ անձամբ գնացի և ես, այլ քուն հատաւ յաչաց իմոց. և ձգեալ զվաղակաւորն յաղղերէ՛ բարբառեցայ առ նա յուսահատ անձամբ. եթէ և այս գիշեր ինձ զուարթագին արդեօք լուսասցի, մինչև քո մխեալ ի սիրտ արբայի. ա՛հ, երբ իցէ երբ զի զարիւն նորա ջերմաջրով ի չրթանց քոց տեսից կայլակեալ, և յերկիր զերկաթն բնկեցի, և ձեռն ի ծնօտի մտախօ՛հ եղեալ ցմեծ ժամս, այն ինչ խաղաղութեան պատեալ էր զամենայն, և ամենեքին զքնով անկեալ ննջէին, սրտմտեալ անձամբ մռնչեցի անդրէն ի սրտի, եթէ ցերբ իցէ ինձ յապաղել ի գործ, մինչև ցերբ տքնութեամբ մաշեցից զերկարութիւն գիւլերաց, և յափրչտակեալ զսուսերն՝ զելանեմ զանցաներն և զգրանցն բանալ չուրջ դէտակն ունելով և յառազաստ բռնաւորին լուի մընջիկ ՚ի ներքս մտանել մի առնէի. հայեցայ և տեսի զի լոյս լապտերին ընդ աղօտ վառեալ լրջացուցանէր ինձ զոխուր գիւլերն. և հուպ ի գահոյնս մատուցեալ տեսանեմ զնա ինքն զի կերկերեալ խորդայր ՚ի

քուն Թանձրութեան. և նոյնժամայն ձեռն ՚ի վաղակաւոր անդր ձգեալ՝ ընդ նմին և զաչս ՚ի վեր ամբարձի, և յոգւոց ելեալ ՚ի խորոց սրտէ միանգամ կարդացի յերկնս, և անդէն իբրտ. ոչ եթէ յիմէ ինչ զօրութենէ, այլ յաստուածոցն վարեալ շանթառաք բազկէ՛ էջ սուրն փայլակնաբար և մխեցաւ ՚ի սիրտ վիրագին: Նա երիցս անգամ երաց զաչս իւր՝ հայեցաւ յերեսս իմ խեթիւ. և այն ինչ ծանուցեալ զիս՝ ՚ի պակասել բարբառոյն մռնչելով յոգւոց եկան զայրագին, ա՛հ Արտաւան՝ ասէ, և սակաւ ինչ բանս խոխոտեալ, կրրկնելոյ սրոյս ոչ կարաց հանդարտել, զոր Թափ անցուցեալ ընդ կողս նորա հարբստեալ վարսեցի ՚ի գահոյս իւրում, մինչև իսպառ արքուցանել զծարաւ արդարադործ երկաթոյն. և ամիոյիեալ զձեռն իմ հալիւ ՚ի բաց կորզէի ՚ի ժանեաց նորա. և արկեալ անդրէն ՚ի պատեանս անցեալ գնացի ՚ի տեղի իմ մինչև առաւօտն լուսացաւ: Արդ զու գի լուարդ յինչն զամենայն՝ իմաստութեամբ ունկն դիր բանից իմոց՝ ինձ հօր քում անսա. երթ Թագողարիւնդ՝ մի՛ ոք գիտասցէ ինչ առ ժամս:

ԱՐՔԱԿ

Ա՛հ, ո՛ւ անյուր աղէտ. և միթէ իսպառլոսցց արդեօք անհնարին եղեռն. աւա՛ղ, և արդ ո՛ր յոյս վամ զի՛նչ ակնկալութիւն է քո հայր:

ԱՐՏԱԽԱՆ

Դաւ մի պատրաստեմ, Թերևս Թագաւորեսցես դու. զնա՛ դու արդ, զնա՛. ինձ պարտ է մնալ աստէն:

ԱՐՔԱԿ

Վայ ինձ, տաքնապեալ տատանիմ ՚ի ծամէ աստի:

ԱՐՏԱԽԱՆ

Յապաղենս դեռ ևս:

ԱՐՔԱԿ

Բա՛րէ:

ԱՐՏԱԽԱՆ

Մի՛ ևս. երթ մեկնեաց, տեղի տուր աստի, Թոյլ արա ինձ:

ԱՐՔԱԿ

Աւա՛ղ դառն լուսոյ աւուրս, երթ զնա Թշուառացեալք Արբակ. (Գնայ):

ՏԵՍԻՆ Դ.

ԱՂՈՒՄԱՆ

Հապա, գորացիր և քաջ լեր Սրտաւան.
սկիզբն գործոյս և զվախճանն խնդրէ առ
'ի քէն. մի 'ի զուր ինչ պարտաւոր գտայց՝
վրէպ եղեալ 'ի յուսոյ իմէ. ո՞ այն այր
յաշխարհիս Սրեաց՝ յորմէ ես զանգի-
տեմ. ահա իմ եղեալ զգլուխ իմ 'ի կշիռս,
մինչև հեղցի 'ի օպառ արիւն արբունի. ոչ
անարժան ինչ են գոգութեան և ոճիրք
անհնարինք. ընդ անձին ոգորիւ, արհա-
մարհել զխիղճ առ ոտն կոխել, և կալ ան-
ասան յերկիւղէ, պանծալի հանդէս և ա-
նօրէնութեան : Ահաւասիկ Արտաշէս .
խորամանկութեան է ժամս... Զինչ իցէ
անսովոր աղաղակս, տէր արքայ. առ ինչ
արդեօք գալուստ քո այսր գիշերի. առ ի-
մէ՞ այդ բարկութիւն, որ յերեսս քո ցոլա-
նայ 'ի միջոյ արտասուածց :

ՏԵՍԻՆ Դ.

ԱՂՈՒՄԱՆ ԵՆ ԱՂՈՒՄԱՆ

ԱՐՏԱՆԵՍ

Ա՛հ Արտաւան, 'ի քեզ եմ ապաւստան. ձեռն
սուր բարեկամ քալ, հօրօ օգնական. խոր-
հուրդ, օգնութիւն, վրէժխնդրութիւն :

ԱՐՏԱԽԱՆ

Զինչ իցէ անթարգմանելի հրամանս, ա-
ղէ յայտնի արա վաղվաղակի :

ԱՐՏԱՆԵՍ

Աւա՛ղ, հայրն իմ անդ 'ի գահոյս խողխո-
ղեալ գնի :

ԱՐՏԱԽԱՆ

Զխորդ :

ԱՐՏԱՆԵՍ

Ոչ գիտեմ. իզխոր լուծիւն և զմութ գի-
շերիս օգնական գործակից իւր առեալ ա-
նագորոյն որ յայդ յանդգնեցալ :

ԱՐՏԱԽԱՆ

Բա՛բէ փառամոլ ախարն. ո՞ անմիտ և ա-
պերասան իղձ գահասիրութեան, զինչ ի-
ցէ՝ որ գքեզ սանձակոծեսցէ, ոչ գութ ոչ
կարիք և ոչ կապանք բնութեան :

ԱՐՏԱՆԵՍ

Ա՛հ քաջդ, ճշմարտութեամբ հասեալ եմ,
զի անօրէնն այն եղբայր իմէ, Դարեհ իմ
հարազատ :

ԱՐՏԱԽԱՆ

Եւ ո՞ այլ որ կարէր գիշերի մոռանել յար-
քունիս, և մօտ 'ի գահոյսն երթալ : Ոչ
զանխուլ ինչ է և նորա նախնի ոխութիւն,
և ցանկութիւն հայրենի գահին. ահ, վը-
տանդ մեծ է և քեզ տէր. միոյ յանդգ-
նութեան զհետ գան և այլք. առաջին ա-
նօրէնութիւն և զերկրորդն գիտէ ծնանել.
գօսասցի արմատ ձեր յաւիտեան բազմա-
ծին ծնունդք չարեաց : Զգոյշ լեր աղաչեմ.
հան զվրէժ հօր քո՝ փրկեալ զանձն քո :

ԱՐՏԱՆԵՍ

Աղէ եթէ իցէ որ որ 'ի զութ խանդաղա-
տեսցի մահու արքայի, յարհաւրաց աստի
սոսկացեալ, և իմ բարեկամ, հաւալա երթի-
ցէ զվրէժ լուծցէ յանօրէն դաւաճանէն,
հանել ընդ կառապին նորա անել թափել
'ի ծոց նորա զքէն վրիժու ննեգաղբու մե-
րոյ զիւցապին :

ԱՐՏԱԽԱՆ

Եւ ընդ ում աղ խօսեսցի արքայ Արտաշէս,
բայց եթէ ընդ Արտաւանայ և ընդ զօրս
նորա : Արձանասցի հրամանս նորա, արգ-
իսկ սատակեսցի անօրէնն : (Առանձինն)
Արդ և բաղդն իմ առ իս է :

ԱՐՏԱՆԵՍ

Կաց մնա՛. յո՞ երթաս, լուր. ո՞ գիտէ եթէ և
վրէժխնդրութիւն ոչ առաւել ծանր թը-
ւեսցի յաչս արքայի քան զվնասն. զի և
Դարեհ՝ որդի է արքայի :

ԱՐՏԱԽԱՆ

Անիրաւ է գթութիւնդ՝ անիրաւ է խորհուրդ
այգալիսի. հայրասպանն ոչ ևս է որդի, եւ
արգ 'ի սանդաղամետս կողկողազին առ
մեզ ձեռս տարածեալ վրէժխնդրութիւն
պաղատի, 'ի զվրեւ սրտի հօրն և արքայի :
Բա՛բէ, ողորձէ տեսիլն, նա զվէրս իւր՝ նա
մեզ ցուցանէ. ահաւա սիկ և ձայն նորա
աղիողորմ յականջս իմ ազգէ. (Ելանէ) :

ՏԵՍԻԼ Ե.

Արտաշէս եւ Միհրդատ

ԱՐՏԱՇԵՍ

Ա՛հ, զի՛նչ գործ էր որ գործեցաւ Միհրդատ,
և արդ որպիսի սպանդ ելանէ:

ՄԻՀՐԴԱՏ

Հանդարտ լեր, մի անկյի սիրտ արքայոր-
դուդ, մեռցի անօրէնն, և հաստատեցի
գահ արքայութեանդ:

ԱՐՏԱՇԵՍ:

Այլ զիմ արդարադատ բարկութիւն կար-
ծեսցէ աշխարհ մասանս և յաշաղանս
փառամոլութեան և ցանկութեան հայրե-
նի թագին. այս միայն շատ է ստուերածս
ածել գեղեցիկ լուսոյ աշացս, և վրդովել
տագնապել զխաղաղութիւն կենաց իմոց.
ոչ, ոչ. երթիցուք կարճել զհրամանն. (կա-
մի գնալ):

ՄԻՀՐԴԱՏ

(Արցկուն գնալ) Զի՛ գործես տէր, ծամէ արդ
յուշ ամենոյ քեզ և զբոյին թշնամանս.
վատշուէրն այն քո եղբայր շատ իսկ ու-
սոյց ցարդ և քեզ զանգթութիւն:

ԱՐՏԱՇԵՍ

Այլ ինձ չէ արծան նմանել չարեաց նորա,
նորա անօրէնութեամբ ես ոչ արդարա-
նամ. ոյր մեղաց ոչ գտաւ յաշխարհի օրի-
նակ. ապա ոչ ոք պատուհաս կրեսցէ, ե-
թէ շատ իցէ նմա գտանել գործոցն օրի-
նակ:

ՄԻՀՐԴԱՏ

Սակայն ո՛չ այս օրէնք են բնութեան՝ պաշտ-
պանել անձին, եթէ ոչ դու զնա՝ օշինչ
երկրայիմ ասել՝ եթէ նա զքեզ կորուսա-
նէ:

ԱՐՏԱՇԵՍ

Թող աստուածոց կացցեն այս խնամբ, բա-
զուկ Որմզդի ինձ 'ի թիկունս. (Սկսանի
երթալ):

ՏԵՍԻԼ Զ.

Արտաշէս, Միհրդատ եւ Շապուհ

ՇԱՊԱԻՀ

(Մտնալ տաղնապատ ունի զԱրտաշէս և ասէ)
Յո՛ գնաա եղբայր իմ, ուր:

ԱՐՏԱՇԵՍ

Թոյլ տուր ինձ, եղբայր:

ՇԱՊԱԻՀ

Փախչիս յինէն, եղբայր իմ. լուր ինձ, մի
գնար:

ԱՐՏԱՇԵՍ

Թոյլ տուր ինձ, մի յասպաղեր:

ՇԱՊԱԻՀ

Այս իցէ ողջոյն քո առ իս, եղբայր իմ:

ԱՐՏԱՇԵՍ

Եթէ այլ ևս լուսոյ քեզ, յանցաւոր և ան-
իրաւ դատեցայց. (Ելանէ):

ՏԵՍԻԼ Է.

Շապուհ եւ Միհրդատ

ՇԱՊԱԻՀ

Հապա երթ գնա յի և կամիս: (Առ Միհր.)
Մեծ ինչ իրք են Միհրդատ. զահի հարեալ
եմ և դողամ: Արբակ ընդ այցն աճապա-
րեաց 'ի գնալ. Արտաւան զինու վառեալ
'ի միտս կասկածոտս, ոչինչ բարբառի.
եղբայր իմ Արտաշէս խռովեալ յերկինս
բողոքէ և որպէս տեսերդ իսկ յինէն խու-
սալիէ. զի՛ արդեօք եղև Միհրդատ, եթէ
զիտես ինչ, աղէ պատմեա ինձ և ապրեցո
զիս 'ի տագնապողական երկիւղէս:

ՄԻՀՐԴԱՏ

Եւ համբուն ինչ ո՛չ զիտես, եթէ հայր քո
արքայից արքայ սպանաւ զիշերի՛ յիրում
անկողնի յապստամբ բազկէ, և զի Կարեհ
է սպանողն. և մարտ անհնարին զերկոսին
հարապատան վառէ:

ՇԱՊԱԻՀ

Զի՛նչ ասես. արդ ծանեայ՝ արդ կորեաք
թշուառականքս. աւանդ արքայութեանս
Պարսից:

ՄԻՀՐԴԱՅ

Մի՛ ինչ խոռովիր, արքայորդի Շապուհ. եթէ
և դու 'ի նոցա մասին իցես. հրկնչին եթէ
այլ ոչ ևս գտցի արքայ գահակալ, զայդ
մի կարծեր. թող անօրէն վերագին ա-
րիւնն հեզցի:

ՇԱՊՈՒՀ

Ի գորդիլ արքայութեան՝ և ամենեքին սա-
սանին, և անհոգութիւն ծառային չար է.
գիտեմ՝ զի յարիւն հայրենի շաղախեցաւ
անօրէն որդի, և եղբայր իմ Արտաշէս և
նա կայ 'ի վտանգի. և զի՛նչ, կամիս դու
անվիշտ, անկարելի կալ ինձ 'ի զնին աչ-
խարելի այս տեսարանի:

ՄԻՀՐԴԱՅ

Սէր հայրենի 'ի քեզ խօսի, գիտեմ ես,
այլ ինձ...

ՇԱՊՈՒՀ

Մի՛ յաճախեր ինձ բանս 'ի վիշտս իմ, երթ
և դու առ եղբայրն իմ և...

ՄԻՀՐԴԱՅ

Եւ ժամ իսկ է ինձ գնալոյ. (կլանէ):

ՏԵՍԻԼ Ը.

ՇԱՊՈՒՀ

Ո՛վ դիք խնամակալք Արեաց. պահեցէք
զայս գահ, պահեցէք եղբոր իմում Ար-
տաշեսի. այլ զի՛նչ. կորիցէ՛ իմ եղբայրն
Դարեհ, մեր սիրասնունդ հարսպատ. ահ,
այլ ո՛ւայն ոք՝ որ աստուածոցն ընդգէճմ կըք-
րեսցի կամաց. թող սատակեսցի անօրէն
հայրասպանն, կեցցէ Արտաշէս. Ոչ անօ-
րէնութեան ինչ են բանքս, ո՛վ դիք, մի՛
ինձ զայդ 'ի մեղս գրեալիք. չար ժամու
պատահեցի, 'ի վիշտս ծնայ. ո՛վ զիս 'ի մա-
հաչուկ տանէ աստի ապրեցուսցէ. յո՛
դիմեցից. զհայր և զեղբայր և զսիրելին
իմ Արքայ 'ի միում առուր կորուսի:

ՏԵՍԻԼ Թ.

Արտաշէս եւ Շապուհ

ԱՐՏԱՇԵՍ

(Մտեալ) Ահ Շապուհ:

ՇԱՊՈՒՀ

Եղբայր, զի՛ եղև Դարեհի, եթէ կենդանի է.

ցէ, եթէ մխեցեր զձեռն քո յարիւն հա-
րազատիդ:

ԱՐՏԱՇԵՍ

Քաւ այդ առ 'ի յինէն եղբայր իմ. նախանձ
հայրենի զեղու իմ շարժեաց 'ի հրաման
սպանման, այլ անդէն յապաշաւ հարեալ
մեծապէս ստրջացայ. ևս արդ յարգելու
զնա փութացեալ եմ, և վարանեալ չըր-
ջիմ աստ և անդ զհետ Արտաշէսայ և
Դարեհի և ոչ գտանեմ. մի՛ արդեօք յորսս
եղեալ իցէ ընդ այդն:

ՇԱՊՈՒՀ

Ահաւասիկ է Արտաշէս. (Յոցանէ):

ՏԵՍԻԼ Ժ.

Արտաշէս, Շապուհ եւ Արտաշէս

ԱՐՏԱՇԵՍ

Կեցցես կեցցես, տէր արքայ:

ԱՐՏԱՇԵՍ

Եւ ո՛ր էիր ցարդ, զի՛նչ այդ ցնծութիւն 'ի
դէմս քո. եթէ ողջոյն իցէ:

ԱՐՏԱՇԵՍ

Զի՛նչ ողջոյն, մի՛թէ երկեար ինչ և կամ դա-
ռանցար:

ԱՐՏԱՇԵՍ

Եւ զի՛արդ ոչ:

ԱՐՏԱՇԵՍ

Թող անդր 'ի բաց զերկիւղդ, կատարեցաւ
ամենայն. կեցցէ արքայ Արտաշէս. ամե-
նայն թշնամիք նորա եղիցին իբրև դիւ-
րեհ:

ԱՐՏԱՇԵՍ

(Զձակատ հարեալ) Բա՛բէ:

ՇԱՊՈՒՀ

Վայ ինձ:

ԱՐՏԱՇԵՍ

Հայրասպան նենգաւորն ինքնին անկաւ 'ի
ծուղակ:

ԱՐՏԱՇԵՍ

Եղուկ եմ ես, վա՛հ եղբայր իմ, եղբայր իմ
Դարեհ, իմ հարազատ:

ԱՐՏԱՒԱՆ

Առ իմէ՛ իցեն այդ հեծութիւնք , ո՛չ դու ինքն ետուր հրաման :

ԱՐՏԱՇԵՍ

Այլ քեզ պարտ էր իմաստութեամբ հայել 'ի հրամանն :

ՇԱՊՈՒՀ

Յերկիւղ նորա և յապաշաւ պարտ էր քեզ հայել . գնամ ես եղբայր տեսանել , և եթէ է ինչ զրոյց ածեմ վազվազակի . (եյրանէ) :

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՐԱՔԱՂԷԱ ԵՒ ԱՐՄԱԼԱՆ

ԱՐՏԱՇԵՍ

Գոնեայ պարտ էր քեզ զյանկարծաւհաս սրտմտութիւն որդիական սրտիս ճանաչել :

ԱՐՏԱԽԱՆ

Ի դուր էին այդ ամենայն , իմ զօրականք այնպէս քաջացան 'ի հրաման արքայի , զի մինչև իմ 'ի վերայ հասեալ էր գիտապատ անկաւ Դարեհ :

ԱՐՏԱՇԵՍ

Ա՛հ ոչ , ոչ անպատու հաս մնացեն խուժադուժ անօրէն դահիճքն այնոքիկ :

ԱՐՏԱԽԱՆ

Այլ ո՛չ ահա 'ի քուժմէ հրամանէ խրախուսեալ վառեցան նոքա . ապա դու ինքն ես սկիզբն և առաջնորդ գործոյս դառնութեան :

ԱՐՏԱՇԵՍ

Եւ կարի իսկ քաջ , ճանաչեմ զյանցանս իմ . ո՛չ , եղբայր իմ Դարեհ , զխորդ ածեր 'ի վերայ իմ չարիս մեծամեծս . գիտեմ արդ զի ես ինքնին իսկ եմ պարտաւոր արեան հարազատիս :

ԱՐՏԱԽԱՆ

Պարտաւոր , և որով ի իք . թերևս արգարութեամբդ որ զանօրէնն պատուհասեաց . և կամ թերևս արժանաւան վրիժուցն հատուցմամբ փառաց հօր քուժ արքայի . աղէ՛ դու արքայ հանդարտ լեր , սփոփեաց . զայն գիտեա զի ոչ զեղբայր սպաներ դու այսօր , այլ զազան մարդախանձ :

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԱՐՄԱՂԷԱ , ՇԱՊՈՒՆ ԵՒ ԱՐՄԱԼԱՆ

ՇԱՊՈՒՀ

(Մտածե տաղնապա) Աւա՛ղ . ո՛չ , ոչ Դարեհ է սպանողն ,

ԱՐՏԱՇԵՍ

Զի՛նչ ասես :

ԱՐՏԱԽԱՆ

Եւ ուստի՛ գիտացեր դու զայդ . ո՛ պատմեաց քեզ :

ՇԱՊՈՒՀ

Անօրէն տիրապանն արդ իսկ անկաւ 'ի ծուղակ , մերձ 'ի պատուար արքունի զբրախտիս . փախուստ նորա և տեղին և պատ 'ի պատգրոյցք , այլազու նեալ դէմք , և երկաթն արիւնաշաղախ 'ի ձեռին՝ դու շակեն զնմանն :

ԱՐՏԱԽԱՆ

Զի՛նչ անուն իցէ նորա :

ՇԱՊՈՒՀ

Ամենեքին լռեն զայն , և 'ի հարցանելս իմում՝ այր այր իւրաքանչիւր ընդ երկիր պշոյր :

ԱՐՏԱՇԵՍ

Մի՛ արդեօք Արբակ իցէ , Արտաւան :

ԱՐՏԱԽԱՆ

Զի՛նչ ասես , արքայ . (Պառնճիկն) Այդպէս է ճշմարիտ՝ մատնեցաւ որդին իմ :

ԱՐՏԱՇԵՍ

Ապա կրկին միշտց պարտաւոր գտայ ես . և զիսրդ ի գահ անդր շաղախեալ յարիւն անպարտ հարազատին ելցէ Արտաշէս յարհաիրս Պարսից և յատելութիւն բուր աշխարհի : Ո՛վ անօրէն հրաման , ո՛վ ձեռն ամպարիւտ . ապա յայսմ հետէ ոչ գոյ ինձ խաղաղութիւն , ոչ գոյ ինձ հանգիստ՝ չիք ինձ մխիթար մինչ ի լունչ յետին . ձայն ահեղ մտացս խղճի անպատկառ կշտամբիչ հնչեցէ 'ի սրտի . բաժին եմ դժոխոց՝ սանդարամետք պաշարեսցեն զանձն իմ 'ի հուր բոցավառ խաւար մի . դամաճ , եկեսցեն հասցեն զինն պատեսցին և կրկին ճիւղադք բարկացայտ ոգիք երկուց քաջազանց , նեղել և տաղնապել սպառնալեօք մահու զաւուրս կենաց . գի-

չեր հանգստեան՝ ինձ այսուհետեւ 'ի քուն
դառնութեան, և անուրջք անդոհականք
խօսական ցնորք իջեալ մածանին զար-
տեանամբք իմոցս աչաց:

ՇԱՊՈՒՀ

Քափեցի սալա բարկութիւն քո 'ի վերայ
անօրինին. արդարացի անձն քո առաջի
ազանց մահուամբ պարտաւորին:

ԱՐՏԱՇԵՍ

Ո՛ւր իցէ չուառականն այն. ածցի զառա-
ջեալ:

ԱՐՏԱՒԱՆ

Երթամ ես ածեմ՝ զնա:

ԱՐՏԱՇԵՍ

Կաց դու այսր, Արտաւան. մի ոք մեկնեցի
յինէն. յանկարծ եթէ արդ և ամենայն բա-
րեկամք իմ լուրջ զինե. էին: Ո՛ւր իցէ Ար-
բակ, Արտաւան. այս իցէ սէր նորա, նա
միայն եթող զիս 'ի ժամուս. ապա ոչինչ
խաբիմ ես:...

ՇԱՊՈՒՀ

Ոչ գիտես եղբայր՝ զի հալածեցաւ նա յար-
քունեաց աստի:

ԱՐՏԱՇԵՍ

Դուրձցի անդրէն Արբակ, ես զնա արձա-
կեմ:

ՏԵՍԻԼ ԺԳ.

Արտաշէս, Շապուհ, Արտաւան
եւ Միւրդատ

ՄԻՀՐԳԱՏ

(Բերէ զԱրբակ և ասէ) Արբակ է սպանողն.

ԱՐՏԱՇԵՍ

Ո՛րպէս:

ՄԻՀՐԳԱՏ

Տեսէք 'ի դէմն նորա զպատկեր չարեացն:

ԱՐՏԱՇԵՍ

Բարեկամն իմ:

ԱՐՏԱՒԱՆ

Որդեակն իմ:

ՇԱՊՈՒՀ

Մերեմն իմ:

ԱՐՏԱՇԵՍ

Ո՛չ իսկ և սիրտ իմ զնաց այժմիկ, Արտա-
ւան: (Առ Արբակ) Այսպէս երեխս դու ա-
ռաջի իմ, Արբակ, զիսրդ իշխեցեր ձեռ-
ներէջ լինել յայդ չարիս:

ԱՐԲԱԿ

(Հեղուրեամբ) Անպարտ եմ ես, տէր արքայ:

ՇԱՊՈՒՀ

Ո՛ տայր:

ԱՐՏԱՇԵՍ

Եթէ անպարտ իցես՝ արդարացո զանձն
քո, լոյծ զկասկածանս, և յայտնի լիցի
անմեղութիւն քո:

ԱՐԲԱԿ

Չեմ ես փնասապարտ յիրս ինչ. իմ արդա-
րանալ այս է:

ԱՐՏԱՒԱՆ

(Ընդ ինքն) Երանի թէ իսպառ լուէր:

ՇԱՊՈՒՀ

Իսկ զի՛նչ էր ապա սրտմտութիւն ռիսու-
թեան քո ընդ հայրն մեր Քսերքսէս, ո՛չ
ես իսկ տեսի յառաւօտուն զխիզախեալ
խորհուրդս քո:

ԱՐԲԱԿ

Արդարութեամբ էին:

ԱՐՏԱՇԵՍ

Իսկ զի՛նչ փախուստ քո:

ԱՐԲԱԿ

Ճամարիտ էր:

ՇԱՊՈՒՀ

Իսկ լուութիւնդ զի՛նչ:

ԱՐԲԱԿ

Արժան և իրաւ:

ԱՐՏԱՇԵՍ

Չի՛նչ ապա այլադուռիլ երեսացդ:

ԱՐԲԱԿ

Ի հարկէ իրացն էր:

ՇԱՊՈՒՀ

Իսկ երկամբն արիւնաթաթաւ:

ԱՐԲԱԿ

Ի ձեռին իմում գտաւ, զայդ ոչ ժխտեմ:

ԱՐՏԱՇԵՍ

Իսկ ո՛չ ապա փնասապարտ իցես դու:

ՇԱՊՈՒՀ

Ո՛չ դու իցես սպանողն:

ԱՐԲԱԿ

Անպարտ եմ ես յարեմնէ այսի:

ԱՐՏԱՇԵՍ

Սակայն արտաքին տեսիլն դքէն դատախազէն, դատապարտէ դքեզ Արքակ:

ԱՐՔԱԿ

Գիտում ես, այլ որ զարտաքինն միայն տեսանէ՞ խարի:

ԱՐՏԱՇԵՍ

Ոչինչ խօսիս և դու Արտաւան, խօսեալց:

ԱՐՏԱԽԱՆ

Չահի հարեալ կամ տէր, և դողամ յանհնարին չարեացս:

ԱՐՏԱՇԵՍ

Աւաղ, պի՛նչ գործեցից. արդ պարտ է ինձ և զսիրելի բաքեկամն պատուհասել իբրև ոխերիմ թշնամի: Այս իցէ Արքակ հաւատարմութիւն քո, այ անագորոյն. այն քո առաջին սէր և բարեկամութիւն պատրանք էին ուրեմն անօրէն հոգւոյդ. յանկարծ եթէ մոռացեալ էր իմ զժամն զայն, յորում արեամբ չափ շահատակեալ յասպարէզ մարտին թափեցեր զիս 'ի ձեռաց թշնամաց. զի 'ի հատուցանել ինձ արդ 'ի ծոց քո պէ՛ն լիբժուց տարապարտ աւրեան հօր մերոյ ոչ գտանէի ապաշնորհ առ քեզ:

ԱՐՔԱԿ

Մի՛ մոռանար զիս տէր, և մի՛ ընդ վայր հարկաներ զսէր քո առաջին, վասն անպարտ դատապարտելոյս. եթէ երբէք արժանի գտայ այնմ, զնոյն և արդ զիտասլիր:

ԱՐՏԱԽԱՆ

Այ յանդուդն եղեռնաւոր, և զիարդ իշխես պահանջել սէր, որդի ապստամբ. յամօթ արարեր և զիս զտառապեալ հայրդ:

ԱՐՔԱԿ

Եւ դժւ ևս, հայր, յարուցեալես 'ի վերայ իմ:

ԱՐՏԱԽԱՆ

Եւ զի՛նչ խնդրէիր, միթէ և ինձ հազորդ լինել չարեացդ ողորմելովս: (Այ Արտաւան) Ազն արքայ ցոյց զարդարութիւն քո. ահաւասիկ ես ինքնին դահիճ եմ նորա. ոչինչ օգնեացէ նմա հայր ունել զԱրտաւան. մոռա դու զիմ սէրն՝ մի յիշեր զարիւնն ուրով զդաշտա ոռոգեցի 'ի վերայ դահիս Արեաց. ընդ բազմացն որ հեղան արիւնք, հեղցի և այս:

ԱՐՏԱՇԵՍ

(Ինքնին) Բա՛բէ մոռերիմ և արիական սրտին:

ԱՐՏԱԽԱՆ

Կնքեա արդ, կնքեա զդատակնիք պատուհասին, մի յապաղեր, և եթէ դուք ինչ նեղէ գրեք 'ի բաց թօթափես:

ԱՐՏԱՇԵՍ

Այլ որո՞վ հոգւով. թոյլ տուք ինձ վայր մի, ոչ հանդուրժէ սիրտ իմ տալ զդատակնիք անօրինիդ. աւաղ 'ի միում ժամու ահա եղէ ես յանցաւոր թաղաւոր, բարեկամ և դատաւոր. (Ելանէ):

ՏԵՍԻԼ ԺԴ.

Շապուհ, Արքակ, Արտաւան եւ Միհրդատ

ԱՐՔԱԿ

(Ինքնին) Զիարդ հանդուրժեացես այսչափ նախատանաց հէ՞ղ և թշուառական:

ՇԱՊԱԻՃ

Զի՛նչ էր որ եղև:

ԱՐՏԱԽԱՆ

(Ընդ ինքն) Զահի հարեալ եմ և դողամ:

ՇԱՊԱԻՃ

Ոչ ևս ակն ունիմ հաշտութեան:

ԱՐՔԱԿ

Ո՛չ հայիս դու յիս, ո՛ հայր. այլոցն դատախազութեան անտրտունջ համբերէի. այլ զի որ ինձ զիկանս ետ նոյն դարձեալ ինձ զմահ խնդրիցէ, կիրք են զժոխումբեր. գոնեա դու հայր ողորմեա որդւոյ քում:

ԱՐՏԱԽԱՆ

Զեմ ևս քո հայր, ոչ դու իմ որդի. չողորմիմ տիրասպանին, դու քեզէն ածեր քեզ հորուստ, դու և զհայր քո տանջես աւասիկ. (Ելանէ):

ՏԵՍԻԼ ԺԵ.

Միհրդատ, Արքակ եւ Շապուհ

ԱՐՔԱԿ

Իսկ ընդէր բնաւ այսպէս ցատուցեալ էք 'ի վերայ իմ, ով զիք. գոնեա ուրեմն լուիցէ ինձ Շապուհ, լուիցէ և ողորմեցի:

ԵԱԳՈՒՀ

Արդարացիր նախ, և ապա լուայց քեզ,
այլ ցորչափ յանցաւոր տեսանեմ գեղզ՝ ու
զորմիլ քեզ չէ՛ արժան։

ԱՐԲԱԿ

Եւ չիք ոք որ կարճեցէ զիս 'ի կենաց աս-
տի. ա՛հ Միհրդատ՝ եթէ զթաւ դու յիս,
ձգեա՛մ զձեռն քո...

ՄԻՀՐԴԱՅ

Մի՛ զայդ՝ մի խօսիր ընդ իս։

ԱՐԲԱԿ

Ա՛հ արքայորդիդ։

ԵԱԳՈՒՀ

Ի բաց կաց յինէն։

ԱՐԲԱԿ

Այլ լուր դու ինձ քաջդ։

ՄԻՀՐԴԱՅ

Ա՛հ, ոչ կարեմ լսել քեզ. (Ելանէ)։

ՏԵՍԻԼ ԺՁ

Արբակ եւ Շապուհ

ԱՐԲԱԿ

Լուիցէ ինձ վայր մի Շապուհ։

ԵԱԳՈՒՀ

Ոչ լսեմ տիրասպանին, ոչ լսեմ մահա-
պարտին ոչ միոյ այլ կրկին արեան՝ հօր
մերոյ զիւցազին և անպարտ իմ հարազա-
տիս. ա՛հ եղբայր իմ, 'ի վերայ քո սիրտ
իմ գեւանի. մեղաք, թող մեզ զանգիտու-
թեան յանցանա քոց հարազատաց։

ԱՐԲԱԿ

Զի՛նչ իցենի բանքդ, զի եղև եղբօր քում և
ոյր։

ԵԱԳՈՒՀ

Ա՛հ եղբայր իմ նազելի... այ անօրէն դա-
հիճ չարաշուք. 'ի պատճառս քո՝ այն իմ
ցանկալի եղբայրն Դարևն անդ 'ի տխուր
անտառին անկեալ կայ մահու տարածեալ.
զի՛ պակուցեալ կաս. լուր զեղեռն՝ զոր
գործեալ քո՝ և զիտես ոչ։

ԱՐԲԱԿ

Իմ այգպիսի ինչ գործեալ բնաւ չիք, և 'ի
լսելն անգամ զգողանի հարեալ սոսկա-

ցեալ կամ. սակայն աղաչեմ՝ զքեզ մի թա-
քուցաներ յինէն, պատմեա ինձ զի եղև
Դարևն, զի առցես և զիս քեզ ողբակից։

ԵԱԳՈՒՀ

Մի ստեր, մի չնթեր դարանիր, Արբակ. դու
և անօրէն գործ սպանութեանդ եղէք
պատճառք սատակաման վախճանի կո-
րչստեան նորա։

ԱՐԲԱԿ

Իսկ զիմրդ, որպէս։

ԵԱԳՈՒՀ

Զի 'ի փախչել քո և 'ի թաքուցանել զերեւ-
րեալ հոգիդ, կարծիս թիւր և սնոտի 'ի
մտի եղեալ Արտաշէս եթէ նա իցէ դաւա-
ճան հօր մերոյ Քսերքսեայ՝ 'ի տագնա-
պեալ սրտէ ձայն արձակեաց, վրէժ խըն-
դրեաց և թռեալ 'ի լեզուէն արագաթիւ
հրամանն՝ որ զհարազատն 'ի սպանդ վա-
րէր 'ի վրէժ և 'ի զինուում փառաց զիւցա-
զին, Անդ հայր քո Արտաւան արագալուր
պաշտօնեայ կամակատար հրամանի ար-
քայի 'ի մէջ անցեալ, իբրև զարծուի սրա-
թև այնպէս խոյացեալ թեանայր. և ապա
որպէս ես լուայ հաւաստի, առեալ ընդ
իւր արս անօրէնս և արիւնարբուս 'ի
գնդէ իւրմէ, այն ինչ Դարևն յառաւօտին
պահու արագադ տուեալ պառականս սը-
փոեալ՝ յորս երէոց արշաւեալ նահատա-
կէր 'ի մէջ անտառախտ մայրեացն՝ և
վարազ մի փրփրերալս առաջի արկեալ
վարէր տագնապաւ՝ չուրջ պարսեալ ա-
զատագունդ արի մանկաւոյն, անդ ապա
Արտաւան իւրովքն հանգերձ իբրու ու-
ռուցիկ մրրիկ 'ի ներքս փոթորկեալ խու-
ճապէ դամենեսին, և ձայն տուեալ աղա-
ղակ եգեալ առիւծաբար գոչելով՝ իբրու
այն եթէ 'ի վերայ վարագին յարձակեալ
գայցէ, առ հասարակ դամենեսին վայրա-
վատեալ ցրուէ. և մեկուսի 'ի մէջ առեալ
զԴարևն և չուրջ զանօրէն դահիճան բոլո-
րեալ. անդէն իրազգած լինի իմաստուն և
զգաստ պատանին, և մտրակ 'ի կուշտ ա-
րարեալ պատառէ զամբոխն, և 'ի բաց
վաղեալ և ձայն արձակեալ զընկերսն կո-
չէ 'ի թիկունս. իսկ Արտաւան յանհնարս
մտեալ իւրովքն արշաւակի գէնտ սուրա-
լով թօթափն 'ի վերայ տարափ մի նե-
տից, և շնչտ ընդ մէջ թիկանցն հարեալ

դիտապատ տնա յերկիր տապալեն...
 Իսկ զինչ այլ այս ամենայնի պատճառք,
 այլ քո չարանիթ սիրտ. այ անողորմ գա-
 ղան կեղծաւոր դաւաճան: (կամի գնալ):

ԱՐԲԱԿ

(կայնալ գնա) Ա՛հ, իմ Շապուհ:

ՇԱՊՈՒՀ

(Թորսփէ) Ա՛յ անօրէն, 'ի բաց տար յինէն
 զարկնախանձ ձեռն:

ԱՐԲԱԿ

Այլ անստ ինձ սակաւիկ մի. իմ չէ սպա-
 նեալ զչայր քո Քաներքսէս:

ՇԱՊՈՒՀ

Եւ ո՛ր այլ ոք, աղէ՛ ասա:

ԱՐԲԱԿ

Ոչ կարեմ. լեզու իմ 'ի քիմս...

ՇԱՊՈՒՀ

Ստախոս է լեզուդ, գրաբանէ՛ զուր դարա-
 նի:

ԱՐԲԱԿ

Ա՛հ, սիրտ իմ...

ՇԱՊՈՒՀ

Սիրտ քո քան զվէ՛մ ապառաժ, ոչ զարհու-
 րի 'ի մեղաց իւրոց:

ԱՐԲԱԿ

Ես անպա...

ՇԱՊՈՒՀ

Սպանող ես դու:

ԱՐԲԱԿ

Անպարտ եմ ես յարենէ:

ՇԱՊՈՒՀ

Անպարտ ես դու:

ԱՐԲԱԿ

Երդնում 'ի դիս:

ՇԱՊՈՒՀ

Ա՛յ նենգաւոր, երդնուս ևս 'ի կորուստ ան-
 ձին քո:

ԱՐԲԱԿ

(Յաագիւն) Աւա՛ղ, յոր սահման հասոց գիս
 անգթութիւն ծնողիս: Եթէ գիտէիր դու...

ՇԱՊՈՒՀ

Է՛հ, քաջ իսկ 'ի վերայ հասնալ է իմ սպառ-
 ՊԵՐԱԿ Ա.

նալեաց միմեալ սրտիդ ընդդէմ հօր մե-
 լոյ:

ԱՐԲԱԿ

Սակայն ոչ ինչ ես իրազէտ:

ՇԱՊՈՒՀ

Այսօր իսկ լուայ զսպառնալիս քո:

ԱՐԲԱԿ

Սակայն խաբիս:

ՇԱՊՈՒՀ

Ապաքէն ես յայնժամ խաբեցայ՝ յորժամ
 իբրեւ մտերիմ բարեկամ գբեզ ողջունեցի:

ԱՐԲԱԿ

Արդ ուրեմն...

ՇԱՊՈՒՀ

Արդ գալլիմ մերժիմ 'ի քէն:

ԱՐԲԱԿ

Եւ ո՛չ հաւատաս դու ինձ:

ՇԱՊՈՒՀ

Ոչ ևս անսամ քեզ, ոչ լսեմ տիրասպանին.
 ասա՛ դու միանգամ եթէ պարտաւոր եմ,
 և յայնժամ լուայց քեզ: (Ելանէ)

ՏԵՍԻՍԻ ԺԷ.

ԱՐԲԱԿ

(Թեալ գնալոյ նորա). Ոչ ինչ այլ մնաց չարա-
 չուք բաղդին ածել Թափել յիմ վերայ. 'ի
 միռում ժամու հասին պատեցին զիս նետք
 նորա. զբարեկամն կորուսի, հայրն իմ ինձ
 ոսոխ համբարձեալ կայ՝ զինէն չարախո-
 սէ. ոտնհար եղեն ինձ ամենեքին. եթէ
 ցայս վայր լռել պարտ իցէ... սակայն լռել
 արժան է, խօսել չէ հնար: Ո՞ր այն ոք ա-
 ռաւել քան զիս հէգ և թշուառական. այլ
 գթա՛մ յիս երկինք, անմահ արփի՛ արգարա-
 դատ տէր. եթէ իսպառ սրտմտեալ էք
 յիմ վերայ՝ բազում արութեան ինձ պէտք
 են, և զիարդ ապրեցայց ես 'ի ձեռաց ձե-
 րոց: Անկեալ կամ 'ի ծով դառնութեան ան-
 պատսպար անօգնական. գոչեն ալիք, պա-
 տին երկինք, խուժեն մրրիկք, և բաղդն
 իմ զիս առեալ վարէ. արդարութիւն միայն
 ընդ իս, այլ և նա զիմ նաւ բեկանէ:



ԱՐԱՐՈՒՄԸ Բ.

ՏԵՍԻԼ Ա.

Արտաշէս, Միհրդատ եւ Արտաւան

ԱՐՏԱՇԵՍ

Երբ Միհրդատ, ամ այսր 'ի բանտէն զԱրբակ: (Աս Արտ.) Ահաւասիկ կատարեմ զկամս քո. հաճեսցին երկինք, զի արգաւրացի նա յատենէ աստի:

ԱՐՏԱՒԱՆ

Մի այնպէս ինչ կարծեսցէ արքայ, եթէ ես զթամ ինչ 'ի նա կամանալարտ համարիմ. յայտ յանդիման նշաւակիցաւ չարութիւն նորա. որդի մահու է այրն, վրիժապարտ է՝ մեռցի. զգոյշ լիւր եւ անձին քում, արքայ, դեռ ես ոչինչ է մեզ յայտ վախճան գործոյս, եւ ոչ համախոնք դորա. այլ ես ջանացայց յայտենէ քեզ զամենայն:

ԱՐՏԱՇԵՍ

Նախանձ արկանէ յիս արութիւն սրտիդ, քաջդ Արտաւան. սոսկացեալ է իմ ընդ կիրս բարեկամին՝ եւ քեզ չէ ինչ փոյթ զորդւոյդ:

ԱՐՏԱՒԱՆ

Եւ յիս ինքն ձայն հնչեաց բնութեան, գորով հայրենի. սակայն յաղթեն իրաւունքն. չէ նա իմ որդի՝ որ այսպէս զիս յամօթ առնէ:

ԱՐՏԱՇԵՍ

Այդ իսկ քո արգարակորով սիրտ՝ շնորհս մաղթէ Արքայայ. առաւել ես զանձն իմ քեզ պարտաւոր դատիմ, որչափ դու չարախօսես զմանէ. ապիւրախտութիւն մեծ է ինձ առ քեզ, պատուհասել զքեզ 'ի նմա. աղէ Արտաւան՝ խնդրեսցուք ինչ հնարս փրկելոյ զնա, այսմ եւ դու ընդ իս խնամ տար:

ԱՐՏԱՒԱՆ

Զինչ առնել է ինձ, ուր ամենայն ինչ դատախազէ զմանէ, եւ ինքն իսկ Արքակ կարկեալ համարացեալ ոչինչ արգարախօսէ զանձնէ:

ԱՐՏԱՇԵՍ

Այլ ոչ ահա անպարտ ասէ նա զանձն. ոչ

զիտէր լեզու նորա խօսել սուտ, եւ զիմորդ այսպէս արագ փոխեցաւ. թերեւ է ինչ պատճառ լռութեան նորա, խօսեալոյ դու միանգամ ընդ նմա Արտաւան. իցէ՞ թէ յայտնեսցէ նա հօր իւրում: Ես մեկնիմ աստի վայր մի. խօսեաց ընդ նմա համարձակ տես զնեա մանր զսիրտ նորա. գիտ նմա եւս ինչ փրկութեան, հայեաց 'ի կեանս որդւոյդ, եւ 'ի փառս գահիս աշխարհիս Արեաց. եւ եթէ կարօղ ինչ իցես խաբել եւ զիս՝ ներեմ քեզ. միայն դու դարձաւ իս զիմ մտերիմ բարեկամ, զիմ հոգւոյ հատոր: (Ելանէ):

ՏԵՍԻԼ Բ.

Արտաւան, Միհրդատ եւ Արբակ

ԱՐՏԱՒԱՆ

(Յետ զնալոյ նորա) Արդ հանգեսայ... արդ ամենայն ինչ յաջողեալ է 'ի ձեռս իմ... Մատիւր այսր Արբակ, որդեակ իմ առ իս մատիւր:

ՄԻՀՐԴԱՏ

(Մտանէ ածեալ ընդ իւր եւ զԱրբակ) Ո՛ւր իցէ արքայ, Արտաւան:

ԱՐՏԱՒԱՆ

Մեկնեցաւ նա աստի. տեղի տուր եւ դու վայր մի առ 'ի մէնջ, մինչեւ 'ի նշան ձայնիս: (Ելանէ դարձեալ Միհրդատ)

ՏԵՍԻԼ Գ.

Արտաւան եւ Արբակ

ԱՐԲԱԿ

(Յետ զնալոյ Միհրդատայ) Հայր իմ միայն ընդ իս:

ԱՐՏԱՒԱՆ

Ահա յաջողեցաւ ինձ, որդեակ իմ Արբակ, ազատել զքեզ 'ի սպառնալեաց մահուն. խնդրեցի ես յանմտութենէն Արտաշեսի խօսել ինչ ընդ քեզ առանձինն. ժամ է արդ դաւելոյ զնա եւ զիրան. եկ երթիցուք ընդ գողունի ճանապարհ յանձանօթ վայրս:

ԱՐԲԱԿ

Սակայն այդ փախուստ պարտաւոր ցուցանէ զիս:

ԱՐՏԱՒԱՆ

Ե՛կ այսր, անմիտ ամբարտաւան, ազատել
դքեզ խնդրեմ և թափել 'ի ժանեաց զա-
ղանին, և ածել զքեզ 'ի փառս, դուցէ և
յարքայութիւն ես:

ԱՐՔԱԿ

Զինչ ասես, թագաւորութիւն:

ԱՐՏԱՒԱՆ

Ի բազմաց հետէ, որպէս և գիտես, ատելի է
տունն արքունի. երթիցուք, շատ է երևել
քեզ առաջի տաղնապետ զօրականին. ըս-
պարապետք դնդից բարեկամութեամբ են
ընդ իս:

ԱՐՔԱԿ

Ապտամբեցայց ուրեմն յարքայէ. և 'ի
խորհելոյ զայդ զամօթի հարեալ կամ. թող
ինձ, հայր, զանմեղութիւն իմ:

ԱՐՏԱՒԱՆ

Յայս այլոց արդէն իսկ դատապարտեալ
ես. ահաւասիկ և 'ի կապանս արկեալ:

ԱՐՔԱԿ

Այլ այս ոչ արդարութեամբ ինչ է:

ԱՐՏԱՒԱՆ

Այդ ո՛չինչ օգնէ. արգարութեանն պար-
ձանք 'ի խորհուրդս մարդկան է, և եթէ
երբէք որոշեսցի նա անտի՛ յոչինչ լուծա-
նի. նա միայն է արդար որ գիտէ քաջ
ձեւանալ առաջի մարդկան, և զսիրտ իւր
զողանալ յաչաց նոցա:

ԱՐՔԱԿ

Խարիս, հայր. շատ է արդարոյն տեսանել
ինքնին զանձն իւր. նա 'ի ծածուկ անձամբ
զանձն արդարացուցանէ, և դատապարտ
առնէ. և աներկիւղ ունչս առնէ ձայնի
ամբոխին:

ԱՐՏԱՒԱՆ

Այդպէս իցէ. այլ միթէ օրէն իցէ արդեօք
ընտրել զարգարութիւն քան զկեանս:

ԱՐՔԱԿ

Եւ զի՛նչ արդեօք համարիցիս դու զկեանս
զայս, հայր:

ԱՐՏԱՒԱՆ

Գերազոյն պարգև աստուածոց, որդեակ:

ԱՐՔԱԿ

Աւուրք մեր երթալով երթան և պակա-

սին. ժամէ 'ի ժամ՝ դիմեալ զնամբ 'ի դուռն
տապանին. նա մանաւանդ և անդատին 'ի
խանձարրոց սկսանիմբ մեռանել:

ԱՐՏԱՒԱՆ

Անսացից քեզ այլ ևս, կամ կուեցայց 'ի
վերայ փրկութեան անձինդ. մի ինչ այլ
խնդրեր դու այժմիկ, բայց զկամս հօր քո.
փութա՛, մի յապաղեր:

ԱՐՔԱԿ

Մի՛ հայր, աղաչեմ զքեզ. այս իցէ իմ առա-
ջին տեսաստութիւն քոյոյ հրամանիդ:

ԱՐՏԱՒԱՆ

Բռնի ածեմ զքեզ այժմ, փութա՛ վաղվա-
ղակի:

ԱՐՔԱԿ

Թոյլ արա ինձ հայր, վտանդ մեծ ածես
հայրենի մեծարանաց որդւոյդ, եթէ այլ
ևս բռնադատես զիս:...

ԱՐՏԱՒԱՆ

Սպառնաս ևս, մանուկ մեղանչական. զի՛նչ
ունիցիս առնել, աղէ՛ ասա:

ԱՐՔԱԿ

Ոչ գիտեմ, այլ մահու չափ պնդեցայց 'ի
խորհուրդս իմ:

ԱՐՏԱՒԱՆ

Ար՛ք Արքայ. մի պատահեցայց քեզ սըրտ-
մբտեալ անձամբ, փութա՛ մի յապաղեր:

ԱՐՔԱԿ

Մի՛հրդատ, Մի՛հրդատ:

ԱՐՏԱՒԱՆ

Լուռ լիւր, պապանձեաց, որդի անօրէն:

ՏԵՍԻԼ Դ.

Արտաւան, Արբակ եւ Միհրդատ

ՄԻՋԴԱՆ

(Մտանէ և ասէ) Զինչ իւր իցեն:

ԱՐՔԱԿ

Միհրդատ, ապրեցո զիս 'ի ժամէ աստի.
տա՛ր զիս զարձեալ 'ի բանտ. տուք ինձ դար-
ձեալ զկապանս իմ:

ԱՐՏԱՒԱՆ

(Ասանձիկ) Սրտմտութիւն վառէ զիս այ...

ԱՐՏԱՆ

(Ընդհատե) Տուր ինձ զորջոյն քո:

ԱՐՏԱՆԱՆ

Ե՛րթ 'ի բաց, որդի ապստամբ, ոչ ևս լսեմ քեզ:

ՄԻՆՐԴԱՏ

Բա՛րէ, զի՛ եղև ձեզ:

ԱՐՏԱՆ

Բա՛րէ՛ խտտասրտութեանս, բա՛րէ՛ վայրենացեալ սրտին. մոռանան զորդի քո, անտես առնես զտառապեալ որդիդ՝ որոյ չիք ինչ մեղուցեալ առ քեզ: (Ելանէ ընդ Մի-հրանայ):

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐՄԱԼԱՆ

(Յետ գնալոյ ճոցա) Յաղթեա՛մ, Արտալան, յաղթեա՛մ երկրդին. թող զորդին ուղքս տամբ... ա՛հ ոչ կարեմ ատել զնա, սիրեմ զնա. զի օտար են յինէն կեանք նորա. ցասուցեալ եմ յոյժ, միանգամայն և զարմացեալ ընդ նա:

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐՄԱԼԱՆ ԵՒ ՄԻՆՐԴԱՏ

ՄԻՆՐԴԱՏ

Զի՛նչ գործես, զի՛ խորհիս Արտալան, զի՛ այդպէս տարտամեալդ անդաշես. չէ՛ ժամն խորհելոյ՝ այլ գործելոյ: Նախարարք այժմ 'ի խորհուրդ գումարին. ահաւասիկ քեզ սպանդ բազում յագուրդ սրոյդ ծարաւոյ. անդ են 'ի մի վայր թշնամիք քո ամենայն. 'ի ջնջելն գնտա՛՝ զա՛հ արքայութեան քեզ մնայ. այլ փութասցուք նախ ազատել զԱրբակ:

ԱՐՏԱՆԱՆ

Ա՛հ Միհրդատ. տեսնը դիւեռութիւն անօրէն զաւակին. անաստեանց որդին ապրտամբ. մերժեաց նա զարքայութիւն իւր և զկեանս, և զմեզ ընդ իւր կորուսանէ:

ՄԻՆՐԴԱՏ

Զի՛նչ ասես:

ԱՐՏԱՆԱՆ

Զուր տարապարտուց մինչև ցարդ կագէի ընդ նա:

ՄԻՆՐԴԱՏ

Ա՛յս ուրեմն էին բանք քո այժմ: Երթիցուք բռնի հանցուք զնա 'ի բանտէն:

ԱՐՏԱՆԱՆ

Եւ մինչ մեք 'ի բանի արասցուք զպահապանն՝ գտցէ՛ և արքայ պարապ խորհեւոյ ինչ իրաւունս:

ՄԻՆՐԴԱՏ

Եւ կարի իսկ քաջ. այլ թող նախ սատակեցի Արտաշէս, և ապա փրկեցի Արբակ:

ԱՐՏԱՆԱՆ

Սակայն որդին իմ այնուհետեւ մնայ պատանդ 'ի կապանս:

ՄԻՆՐԴԱՏ

Այսպէս արասցուք. մեկնեցուք 'ի մի մեանց և առանձինն անկցուք 'ի վերայ, զու բանտին և ես արքայի:

ԱՐՏԱՆԱՆ

Սակայն տկարանամբ 'ի բաժանելն:

ՄԻՆՐԴԱՏ

Ընտրեսցուք ապա զմի յերկուց աստի:

ԱՐՏԱՆԱՆ

Լաւ ևս է թողուլ զամենայն մինչև առցուք պարապ:

ՄԻՆՐԴԱՏ

Իսկ ապա եթէ Արբակ յերեսաց արքայի ելցէ՛՝ դատապարտեալ:

ԱՐՏԱՆԱՆ

Ի յետին տագնապի և յայլ ինչ հնարս մըտեսնեմբ. շատ է ինձ եթէ դու հաւատարիմ լիցիս ընդ իս: Ես արդ զնամ զգուշութեամբ որսալ զպահապանն. ոչ կարծէի ցարդ՝ եթէ և զգուշութեան ինձ պէտք լինիցին:

ՄԻՆՐԴԱՏ

Ահաւասիկ ես, որպէս գիարդ և կամիս տուր ինձ հրաման:

ԱՐՏԱՆԱՆ

Ա՛հ Միհրդատ, մի մատենը դիս, և շատ է:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Ես զքեզ մատնիցեմ. գիտիցես արդեօք զոր ասեսդ. այդպէս ուրեմն զիս ապերախտ համարիս. մի այդպէս, գիտեմ զնորհանք զոր 'ի քէն գտի:

ԱՐՏԱԽԱՆ

Դոյդն ինչ է զոր արարի ցարդ ընդ քեզ. յայսմ հետէ ծանիցես, եթէ սիրէ զքեզ Արտաւան, զայս միայն արա գու ինձ, եթէ յատեան ձգեսցի Արտակ, դու նմա շնորհս խնդրեսցիր, և ես գիտեմ զոր առնելոցն եմ: Մնա խաղաղութեամբ: (Գնայ)

ՏԵՍԻԼ Է.

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Ողջամբ երթիցես: (Յետ գնալոյ նորա ինքնիկ) Երթ, այլ ելից իրացն սպասեմ, և ի խէթս մտաց վարանեալ՝ յամենայն հողմոյ դողամ. մի եթէ և երկոքեան առ հասարակ կորիցուք: (Յանցանէ Շապուհ) Չքէ քեզ Շապուհ, լուր ինձ: (Ունի գնա)

ՏԵՍԻԼ Ը.

Միւրդատ եւ Շապուհ

ՇԱՊԱԽ

(Անցանէ շտապաւ) Մի լինիր ինձ խոչ ընդ ոտն Միհրդատ:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Յո՞ գիմեալ գնաս:

ՇԱՊԱԽ

Ի խորհուրդ արքայի:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Եկից և ես ընդ քեզ 'ի Թիկունս Արքակայ. Չիարդ, եթէ տակաւին թշնամութեամբ իցես ընդ նմա:

ՇԱՊԱԽ

Ես մահու նորա ցանկամ և դու կենացն, և ահա բաժանեցաք 'ի միմեանց:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Այդպէս խօսիցի սիրելի և մտերիմ բարեկամն Արքակայ:

ՇԱՊԱԽ

Այդպէս խօսիցի Միհրդատ ծառայն Քսերքսէս:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Կամ գլխովին անպարտ է Արքակ յիրիդ յայդմիկ, և կամ վասն քո միայն գտաւ պարտաւոր. այն զի կարի յոյժ սիրեաց նա զքեզ:

ՇԱՊԱԽ

Այդ իսկ է նորա մեծապէս վնասն. մահուամբ նորա սրբեսցի անձն իմ, և լուծցի վրէժ անարգանացս:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Միթէ օրէնքն չեն բաւական դատել զնա առանց քոց հրապուրանաց:

ՇԱՊԱԽ

Ոչ. կասկածեմ ես 'ի գթութենէն Արտաւանի, զանգիտեմ և 'ի բաղդէն Արքակայ:

ՄԻՆԵՐԿԱՆՍ

Երթ անագորոյն, երթ. ամբաստան լեր, սրեա զսուսերս բարկութեան. հար 'ի սիրտ սատակեա զնա. այլ աղէ դու միանգամ ուշիմ լեր. հայեաց յանձն քո, տես գուցէ ստրջասցիս անապան ուրեմն. զիարդ մոռասցիս զառաջին սէրն, այ անագորոյն:

ՇԱՊԱԽ

Եւ զի պիտոյ է ինձ գթութիւն հակառակ արդարութեան. զի կայ իմ և քո տարապարտ բանից, հիմ թափեցեր զոգի իմ յինէն, տազնապեցեր զմիտս. աղէ դարձ առ իս, դարձ սիրտ վրէժխնդիր. տեսցես դու՝ յորժամ յատենի անդ եղիցիս: (Խլանէ)

ՄԻՆԵՐԿԱՆՍ

(Յետ գնալոյ նորա) Ահաւասիկ ես՝ տաց ձեզ ճանաչել զՄիհրդատ. հապա երթիցուք: (Խլանէ. իլանէ վարագոյյն):

Կը շարունակուի: